



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2018 թվականի №---Ս
քաղ. Երևան

**«ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի փետրվարի 14-ի №40Ա որոշումը, որով պահանջվել է դադարեցնել «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից առանց թույլտվության 154.300 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը,

բ) Հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 15-ի №ԱՍ-340Հ գրությունը, որով Ընկերությունը տեղեկացվել է, որ Հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 14-ի №40Ա որոշման պահանջները չկատարելու և առանց թույլտվությամբ ռադիոհաճախականությունը շարունակելու դեպքում Հանձնաժողովը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի հիմքով, իրավասու է կիրառել համապատասխան տույժ կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով,

գ) Ընկերության կողմից առանց թույլտվության 154.300 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու փաստի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2018 թվականի փետրվարի 28-ի N03/11.1/4083-18 գրությունը,

դ) որ Հանձնաժողովը 2018 թվականի մարտի 2-ին վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ դադարեցման որոշում ընդունելուց հետո Ընկերության կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի մարտի 2-ի №ԱԲ-446Հ գրությամբ,

ե) որ Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «Ժբ» ենթակետը և 63-րդ հոդվածի 4.2-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ընկերության նկատմամբ կիրառել տույժ՝ 4 000 000 (չորս միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում ամրագրված գումարը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
 - 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու սույն որոշումը.
 - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- ----- 2018թ.